

մը գրաւականը կը կազմեն: Եւ այսպիսի ճոխութիւն մը ստոյգ իրողութիւն մ'է, իբր արդիւնքը Կոլոտի գրասիրութեան: Դժբախտաբար այս ճոխութեան մէկ ստուերին առջեւ կը գտնուինք հիմայ:

Հետաքրքրական էր գիտնալ նաեւ Կոլոտի Դպրոցէն մնացած այդ գրքերուն մատենագիտական ու մատենախօսական արժէքը, Ազգ. Մատենադարանի հաստատութեան պատմութիւնը եւ ուսումնասիրութիւնը այն բոլոր խնդիրներուն, որ յարաբերութիւն ունին եւ կրնան ունենալ Մատենադարանի մը հետ: Այս բոլորը, սակայն, տարբեր աշխատութեան մը նիւթեր են. աշխատութիւն մը, որուն ձեռնարկած ենք արդէն՝ սկսելով Ազգ. Մատենադարանի ձեռագիրներուն ցուցակագրութեան՝ Տաշեան դրութեամբ: